

Ստեղծել բույսերի համար սննդարար միջավայր

Գյուղացիական տնտեսությունները շահագրգռված են իրենց մշակած ցանքատարածություններից ստանալու բարձր բերք, լավ եկամուտ, ուստի պետք է ստեղծեն նախադրյալներ մշակաբույսերի բերքատվության բարձրացման համար, իսկ մշակաբույսերից բարձր և որակյալ բերք ստանալու կարևորագույն պայման է հանդիսանում հողում սննդանյութերով ապահովվածությունը և հողի բերրիությունը:

Հողը, որի մեջ կատարվում է բույսի արմատային սննդառությունը, իր կազմությամբ միշտ չէ, որ համապատասխանում է մշակվող բույսից բարձր և որակով բերք ստանալու պահանջներին: Բերքը դաշտից հեռացնելով՝ ամեն տարի իր հետ տանում է որոշ քանակությամբ հանքային սնունդ: Մի քանի տարվա ընթացքում, եթե դուրս բերված նյութերը չվերադարձվեն պարարտացման միջոցով, ապա հողը կզրկվի իր սննդանյութերից և կդառնա անբերրի հող:

Պարարտանյութեր են կոչվում այն նյութերը, որոնք, հող մտցնելով կամ բույսերին տալով նպաստում են սննդառության բարելավմանը, հողի մի շարք հատկությունների լավացմանը, հողի օգտակար միկրոֆլորայի կենսական գործունեության ակտիվացմանը, որի արդյունքում բարձրացնում է հողի բերրիությունը, բույսի բերքատվությունը և լավանում է բերքի որակը:

Ռազմավարական Չարգացման Գործակալության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում „Անասնակերի արտադրության արդյունավետ փորձի խթանում թիրախային համայնքներում” ենթածրագրում ընդգրկված ֆերմերներն իրենց կողմից նախատեսված ցանքատարածությունները, որտեղ մշակում են գարի, վարսակ կորնգանի կամ առվույտի ենթացանքով, պարարտացրել են ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով, որը հողում կստեղծի բույսերի համար սննդարար միջավայր և կնպաստի բերքատվության բարձրացմանը, քանի որ **ֆոսֆորը** բուսական և կենդանական օրգանիզմների համար կարևորագույն և անփոխարինելի սննդատարրերից մեկն է: Բույսի պահանջը ֆոսֆորային սննդառության նկատմամբ փոփոխվում է ըստ նրա հասակի: Եթե բույսը զարգացման առաջին օրերին ֆոսֆորի պակաս է զգում, ապա շատ կնվազի վերջնական բերքը: Վիճակը չի լավանա, եթե անգամ այդ օրերից հետո բույսին տրվում է առատ սնունդ: Ուստի բույսի աճի ու զարգացման առաջին շրջանում ֆոսֆորային սննդառությունը որոշիչ նշանակություն ունի բույսի հետագա կյանքի համար: Ֆոսֆորը խիստ կարևոր դեր է կատարում ֆոտոսինթեզի ժամանակ: Ֆոսֆորական պարարտացումը արագացնում է բույսերի աճն ու զարգացումը, լավ է ազդում բերքի որակի վրա, հացաբույսերի հատիկները ավելի են խոշորանում, ֆոսֆորի բավարար քանակությունը բույսերին դարձնում է ավելի ցրտադիմացկուն: Ֆոսֆորի պակասի պատճառով հացաբույսերը դանդաղ են

անցնում զարգացման ցիկերը. այդ բույսերի արմատային ցանցը, ինչպես նաև վերերկրյա օրգանները շատ թույլ են զարգանում, տերևները աղոտ, գորշավուն – կանաչ գունավորում են ստանում:

Կալիումը հատուկ նշանակություն ունի բույսերի հանքային սննդառության գործում: Փորձերով հաստատված է, որ կալիումական պարարտանյութերով լավ պարարտացված դաշտից հավաքած սերմացուները հաջորդ տարում ցանելիս ավելի բարձր բերք են տալիս: Հաստատված է նաև, որ բույսն ավելի լավ է յուրացնում ամոնիումական ազոտը և ավելի շատ սպիտակուց է պատրաստում, երբ լավ ապահովված է կալիումական սննդով: Կալիումի պակասի դեպքում բույսի մեխանիկական հյուսվածքները թույլ են զարգանում, ֆոտոսինթեզի հետևանքով կուտակված ածխաջրերը տերևներից դանդաղորեն են տեղափոխվում դեպի մյուս օրգանները, այդ պատճառով տերևի հարթ մակերեսը խորդուբորդ է դառնում: Կալիումի պակասն իր հետևանքն է թողնում ինչպես բույսի արտաքին տեսքի, այնպես էլ նրա նյութափոխանակության նորմալ ընթացքի, ստացված բերքի քանակի ու որակի վրա:

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճի ու զարգացման համար կարևոր դերը է կատարում **ազոտական** պարարտանյութերով բույսերի սնուցումը: Ազոտային սննդով ապահովված բույսերում արագանում է ամինոթթուների, սպիտակուցների և այլ ազոտական օրգանական նյութերի սինթեզը, արագանում է նաև բույսի աճեցողությունը: Ազոտով լավ բավարարված բույսը, եթե ապահովված է նաև ջրով և մյուս սննդանյութերով, գոյացնում է հզոր ասիմիլյացիոն մակերես: Տերևները մուգ կանաչ գույն են ստանում: Մնուցման բարձր էֆեկտիվությունը կայանում է նրանում, որ այդ ժամանակ բույսերի աճը սկսելու շրջանում հողում սննդանյութերի, հատկապես ազոտի քանակը խիստ պակաս է լինում: Բույսերի թփակալման սկզբին սնուցման կարգով հող մտցրած ազոտական պարարտանյութերը խոնավության պայմաններում հեշտությամբ լուծվում և առաջին իսկ օրերից օգտագործվում են բույսի կողմից: Բույսի ազոտային սննդառությունը կարգավորելով կարելի է կարգավորել ստացվող բերքի քանակն ու որակը: Բույսի սննդառության մեջ ազոտի պակասը փոխում է բույսի արտաքին տեսքը, նրա զարգացումը, օրգանների քանակական հարաբերությունը, դանդաղում է բույսի աճը, գոյանում են քիչ և մանր տերևներ, արմատները շատ չեն ճյուղավորվում ու քիչ են խորանում հողի մեջ, և նվազում է բերքի քանակն ու որակը: